«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

Ք.Երևան **24.08.2020թ.**

2020թ. օգոստոսի 24-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Տնօրինական խորհրդի 2020-2021 ուստարվա անդրանիկ նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյանը, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Ն.Եգորյանը, Ն.Սահակյանը, Ս.Հովակիմյանը, հրավիրված՝ Ուսանողական խորհրդի նախագահ՝ Ա.Խուդաթյանը և արտաքին շահակից՝ Ա.Բարեղամյանը, անդամներ Ա.Գյոզալյանը և Հ.Գրիգորյանը գտնվում էին արձակուրդի մեջ:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. Տնօրինական խորհրդի կազմի վերանայման և հաստատման մասին:
(Զեկուցող, Տնօրինական խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյան):
2. 2020-2021 ուստարվա դիմորդների ընդունելության արդյունքների մասին:
(Զեկուցող՝ Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ն.Սահակյան):
3. 2020-2021 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների մասին:
(Զեկուցող, Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
4. 2020-2021 ուստարվա ուսումնական պլանների հաստատում:
(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):
5. 2020-2021 ուստարվա հաստիքացուցակի և «Հաստիքացուցակում ներառված պաշտոն-ների նկարագրերի (անձնագիր)» նախագծերի քննարկում:
(Զեկուցող, ՄՌԿ և Ընդհանուր բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ս.Հովակիմյան):

1. **Լսեցին.** Տնօրինական խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյանի ելույթը Տնօրինական խորհրդի կազմի վերանայման և հաստատման վերաբերյալ:

Ողջունելով Խորհրդի անդամներին Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ անհրաժեշ-տություն է առաջացել վերանայել Տնօրինական խորհրդի կազմը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդի նախկին անդամ, ուսանող Լ.Յարիջանյանը բարեհաջող ավարտել է ուսումնառությունը քոլեջում, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ուսանողական խորհրդից ընտրել մեկ ուսանող:

Շարունակելով ելույթը, նա ներկայացրեց ուսանողական խորհրդի կողմից առաջադրված որպես Տնօրինական խորհրդի անդամ՝ ուսանողական խորհրդի նախագահ՝ Աշոտ Խուդաթյանի թեկնածությունը: Ամփոփլով ելույթը, Լ.Հարությունյանը առաջարկեց քննարկել և հաստատել տնօրինական խորհրդի նոր կազմը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն՝ Ի.Վարդանյանը իր ելույթում նշեց, որ ուսանողական խորհրդի նախագահ Ա.Խուդաթյանը ուսումնառության ընթացքում ցուցաբերել է ուսման բարձր առաջադիմություն, վայելում է ուսանողության և դասախոսական կազմի հարգանքը, ընկերասեր, ազնիվ արժանի անձնավորություն է: Իր կողմից առաջարկեց կողմ քվեարկել և հաստատել նոր կազմը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Տնօրինական խորհրդի նոր կազմը (կազմը կցվում է):
2. Հանձնարարել Տնօրինական խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյանին նիստի արձանագրության քաղվածքը տրամադրել ուսանողական խորհրդին:

2. **Լսեցին՝** Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանի ելույթը 2020-2021 ուստարվա դիմորդների ընդունելության արդյունքների վերաբերյալ:

Ն.Սահակյանը իր իր ելույթում ներկայացրեց 2020-2021 ուստարվա դիմորդների ընդունելության արդյունքները, նշելով, որ բոլոր աշխատանքները կազմակերպվել են համաձայն ընդունելության պլանի, կանոնակարգի և լիցենզիզյով սահմանված տեղերի: Ամփոփ ելույթից հետո, Ն.Սահակյանը նշեց նաև, որ ցավոք եղել են նաև թափուր տեղեր (ընդունող հանձնաժողովի արձանագրությունները կցվում են):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն՝ Ի.Վարդանյանը իր ելույթում նշեց, որ այս պատկերը հիմնականում կապված է Հայաստանում հայտարարված արտակարգ դրության հետ: Առկա իրավիճակից ելնելով քոլեջի կողմից իրականացված քարոզչական միջոցառումները եղել են միայն համացանցի միջոցով: Կոնկրետ այցելություններ, հանդիպումներ դպրոցներում աշակերտների և ծնողների հետ չեն իրականացվել: Այնուհանդերձ, այս ուստարում դիմորդների քանակը

այդքան էլ վատ չէ: Այս տարվա բացը լրացնելու նպատակով հաջորդ ուստարվա համար անհրաժեշտ է մշակել նպատակային և թիրախային տարատեսակ միջոցառումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2020-2021 ուստարվա դիմորդների ընդունելության գործընթացի արդյունքները ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին կազմակերպել հանդիպումներ առաջին կուրսի ուսանողների հետ:

3. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2020-2021 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը իր ելույթում տեղեկացրեց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժ.Անդրեասյանի 11.08.2020թ. №02/08.1/20778-20 գրության մասին (Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020 թվականի օգոստոսի 10-ին կայացած պարետատան նիստի ժամանակ որոշում է կայացվել նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում դասերը սկսել սեպտեմբերի 15-ից), ի գիտություն ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալի գրությունը որոշում է կայացվել Քոլեջում դասերը սկսել սեպտեմբերի 15-ից:

Շարունակելով ելույթը Ն.Եգորյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա ուսումնական գործընթացին ընդառաջ ուսումնական մասի և ամբիոնների հետ համատեղ իրականացված նախապատրաստական աշխատանքները, որի արդյունքում.

- Վերանայվել են ըստ մասնագիտությունների բոլոր ուսումնական պլանները համաձայն ՊԿՉ-ների:
- Առկա են բոլոր 4 մասնագիտությունների՝ միջնակարգ և հիմնական ընդհանուր կրթության հիմքով ուսումնական պլանների նախագծերը, որոնք այսօրվա նիստով կներկայացվեն հաստաման:
- Ուսումնական պլաններով նախատեսված դասաժամերը հաշվարկվել են, տնօրենի հետ համաձայնեցվել և տրմադրել ամբիոններին:
- Հաստատված ժամաբաշխման հիման վրա պատրաստել է դասախոսների տարիֆիկացիայի նախագիծը:
- Կազմվել են ուսումնական խմբեր (ուսումնական խմբերը ենթախմբրի չեն բաժանվում):
- Պատրաստվել են ըստ մոդուլային ուսուցման դասացուցակները:
- Վերանայվել են ամբիոնների կազմերը:
- Ուսումնական մասնաշենքն ու բոլոր ստորաբաժանումները մաքրությամբ, անհրաժեշտ կահավորմամբ պատրաստ են նոր ուսումնական տարվա մեկնարկին:

Ամփոփելով ելույթը Ն.Եգորյանը հակիրճ անդրադաձավ նաև ՈԱ պատասխանատուի նախորդ ուստարվա ընթացքում իրականացված ուսումնասիրությանը, որի արդյունքում Քոլեջում իրականացվում է բարեփոխումներ և առաջարկեց վերանայել գործող ՄԿԾ-ը,

մշակելով նոր ՄԿԾ-ի ամբողջական փաթեթներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը հավանություն տվեց ՄԿԾ-ի վերանայման գաղափարը և առաջարկեց այն իրականացել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Նախապատրաստական աշխատանքները ընդունել ի գիտություն և համարել բավարար:
2. Հանձնարարել ՈԱ պատասխանատուին սեղմ ժամկետներում մշակել ՄԿԾ-ի վերանայման համալիր միջոցառումներ:
3. Հանձարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին ուստարվա վերջում ներկայցնել կատարողական զեկույց:

4. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարչ Լ.Հարությունյանի ելույթը 2020-2021 ուստարվա ըստ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների նախագծերի, հաստատման վերաբերյալ:

Իր ելույթում նա նշեց, որ ուսումնական պլանների նախագծերը վերանայվել և լրամշակվել են 2020-2021 ուստարվա նախապատրաստական աշխատաքների ընթացքում, որին ակտիվ մասնակցել են նաև ամբիոնի վաիչները: Ամփոփելով ելույթը, նա ասեց, որ նախագծերը քննարկել և երաշխավորվել է Քոլեջի Մանկավաժական խորրդի կողմից (ուսումնական պլանների նախագծերը կցվում են):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն. Եգորյանը իր ելույթում նշեց, որ ուսումնական պլանների նախագծերը հանգամանորեն լսվել և քննարկվել է մանկավարժական խորհրդում և այն լիովին համապատասխանում են պետական կրթական չափորոշիչի բոլոր պահանջներին և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել 2020-2021 ուստարվա ըստ մասնագիտությունների ուսումնական պլանների նախագծերը:
2. Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին հանձարարել հաստատված ուսումնական պլանները տրամադրել մասնագիտական ամբիոններին:

5. **Լսեցին.** ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ս.Հովակիմյանի ելույթը 2020-2021 ուստարվա հաստիքացուցակի և «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի (անձնագիր)»

նախագծերի քննարկման վերաբերյալ:

Ս.Հովակիմյանը նախ ոջունեց խորհրդի բոլոր անդամներին և հաջողություն մաղթեց նոր ուսումնական տարվան ընդառաջ, որից հետո հակիրճ ներկայացրեց 2020-2021 ուստարվա դասախոսական տարիֆիկցիայի հաստիքացուցակի նախագիծը: Նա նշեց, որ այս ուստարում դասախոսական կազմում լուրջ փոփոխություններ չեն եղել:

Նա նշեց, որ հաստիքացուցակը համապատասխանում է Քոլեջի կառավարման կառուցվածքային համակարգին:

Ս.Հովակիմյանը ներկայացրեց նաև ՈԱ պատասխանատուի հետ համատեղ և ՀՀ Կառավարման ակադեմիայի Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Գայանե Հովհաննիսյանի աջակցությամբ մշակված քոլեջի «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի (անձնագիր)» նախագիծը: Նշելով, որ այն ամբողջովին համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ներկայացված ՄՄՈՒՀ-ի ընդհանուր հաստիքացուցակի նվազագույն պահանջներին:

Ամփոփելով ելույթը, Ս.Հովակիմյանը առաջարկեց քննարկել և երկու նախագծերը երաշխավորել ներկայացնելու Ընդհանուր ժողով հաստատման (հաստիքացուցակի և պաշտոնի անձնագրի նախագծերը կցվում են):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը և ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն իրենց ելույթում նշեցին, որ ներկայացված փաստաթղթերը նախապես ուսումնասիրվել են իրենց կողմից և լիովին համապատասխանում են քոլեջի ներկայիս կառավարման կառուցվածքային համակարգին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել 2020-2021 ուստարվա հաստիքացուցակը և ներկայացնել Ընդհանուր ժողով հաստատման:
2. Երաշխավորել «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի (անձնագիր)» նախագիծը և ներկայացնել Ընդհանուր ժողով հաստատման:
3. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Հովակիմյանի նոր հաստատված հաստիքացուցակի մասին տեղեկացնել անձնակազմին:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

Ք.Երևան **30.11.2020թ.**

2020թ. նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյանը, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Հ.Գրիգորյանը, Ն.Եգորյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը, Ա.Խուդաթյանը (ուսանող) և Ա.Բարեղամյանը (արտաքին շահակից):

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը առաջարկեց ոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգել 44 օրյա պատերազմի զոհերի հիշատակը, որից հետո ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. Ուսումնական մասի 2019-2020 ուստարվա կատարողականի ներկայացման մասին:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

2. Քոլեջի 2019-2020 ուստարվա գործունեության հաշվետվության ներկայացում:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

3. Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հաղորդում:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյանի ելույթը՝ Ուսումնական մասի 2019-2020 ուստարվա կատարված աշխատանքների կատարողականի վերաբերյալ:

Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանն իր ելույթում նշեց, որ 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակը կազմակերպվել էր հեռավար (առցանց) եղանակով, այնուհանդերձ Քոլեջի ուսումնական մասի պլանով նախատեսված բոլոր աշխատանքները և միջոցառումները կատարվել է ամբողջովին: Ելույթում հակիրճ ներկայացրեց այն աշխատանքները, որոնք իրականացվել են արտակարգ դրության պայմաններում, մասնավորապես՝

- Վերանայվել են 2019-2020 ուստարվա ըստ կրթական ծրագրերի ուսումնական

պլանները, համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի համապատասխան գրությունների:

- Վերանայվել են հանրակրթության և միջին մասնագիտական գործող ուսումնական ծրագրերը, ըստ առարկաների, համապատասխանեցնելով հեռավար (առցանց) եղանակով ուսուցման համար:
- Դասախոսական կազմի հետ երկրորդ կիսամյակի ընթացքում պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ, իրականացրել քննարկումներ և տրամադրվել են անհրաժեշտ աջակցություն:
- Հաշվետու ուստարում բոլոր ամբիոններում դասավանդող մանկավարժների հետ ժամանակին կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ, տարվել համապատասխան բացատրական աշխատանքներ:
- Այն դասախոսների համար ովքեր քոլեջից հեռավար էին դասերը կազմակերպում տրամադրվել է տարածք, համակարգիչներ և ապահովվել են արագ ինտերնետ կապով:
- Ուսումնամեթոդական ռեսուրսերի բարելավման աշխատաքները իրականացվել են ըստ ամբիոնների կողմից ներկայացված պահանջների:

Ամփոփելով ելույթը, նա նշեց, որ 2019-2020 ուստարվա կատարված աշխատանքների կատարողականը տրվել է տնօրենին և խորհրդի բոլոր անդամներին (զեկույցը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսանող Ա.Խուդաթյանն իր ելութում նախ շնորհակալություն հայտնեց Քոլեջի ղեկավարությանը իրեն ընձեռած վստահության համար, նշեց, որ հաշվետու ուստարին ավարտվեց ոչ այդքան բարենպաստ պայմաններում, քանի որ ամբողջ ուսանողությունը զրկվեց ավարտական քնություններին ֆիզիկապես մասնակցությունից: Որոշ ավանդույթ դարձաց միջոցառումներ ցավոք չիրականացվեցին: Ինչևիցե, ուսումնական մասի աշխատանքների վերաբերյալ ուսանողները, հատկապես առաջին կուրսի, հայտնել են իրենց գոհունակությունը ամբիոնի վարիչնեին և հենց ուսանողական խորհրդի անդամներին՝ հանդիպման ժամանակ:

Ամփոփելով ելույթը, Ա.Խուդաթյանը նշեց, որ ինչպես առաջարկել էր խորհրդի նախկին անդամ ուսանող Լ. Յարիջանյանը մինչև տարվա վերջ ուսումնական մասի հետ կկազմակերպենք հարցումներ ուսանողների շրջանում, ուսումնական մասի աշխատանքները գնահատելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքները գնհատել բավարար (հաշվետվությունը կցվում է):
2. Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին հանձնարարել մինչև ուսումնական տարվա ավարտը ներկայացնել ուսանողների շրջանում կատարված հարցումների արդյունքները:

2. **Լսեցին.** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը Քոլեջի գործունեության տարեկան հաշվետվության ներկայացման վերաբերյալ:

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն իր ելույթում ներկայացրեց Քոլեջի գործունեության 2019-2020 ուստարվա հաշվետվությունը ամփոփ տեսքով: Նա նշեց, որ հաշվետու տարին մեծ փորձությունների առաջ կանգնեցրեց ամբողջ կրթական համակարգը: Անմասն չմնաց նաև մեր քոլեջը, Հայաստանում հայտարարված արտակարգ դրության պայմաններում Քոլեջի անձնակազմը օպերատիվ կարգով վերանայեց և տեղայնացրեց գործող ուսումնական ծրագրերը, հարմարացնելով առցանց ուսուցման եղանակին: Ն.Եգորյանը հավելեց նաև, որ ինքը անձամբ է համակարգել, վերասկել, հավաքագրել համապատասխան ամբողջ տեղեկատվությունը, որից հետո իրականացրել է տվյալների վերլուծություն: Քոլեջի գործունեության հաշվետվությունը հիմնականում կազմված է բոլոր ստորաբաժանումների կողմից ներկայացված կատարողականների ամբողջականությամբ: Հաշվետվությունը հակիրճ և ամփոփ ներկայացնելուց հետո, Ն.Եգորյանը առանձին ներկայացրեց մի քանի խնդիրներ, որոնք իրականացվել են մասնակի և կամբողջացվեն ընթացիկ տարվա ավարտին: Ամփոփելով ելույթը, Ն.Եգորյանը ի տարբերություն նախորդ տարիների ներկայացրեց իրականացված քոլեջի գործունեության **SWOT վերլուծության** վերաբերյալ համառոտ տեղեկատվություն: Նշելով, որ բարելավման գործողությունները ներառված են նոր 2019-2024թթ. ՌԶԾ-ում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի 2019-2020 ուստարվա գործունեության կատարողականը գնահատել բավարար:
2. Հանձնարարել Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին հաջորդ տարվա ընթացքում ներկայացնել ըստ գործողությունների գնահատման կատարողականը:

3. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանի իր ելույթում նշեց, որ քոլեջում ակտիվ իրականացվում է որակի ապահովման գործընթացները, մասնավորապես՝

- 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում առցանց եղանակով ZOOM հարթակի միջոցով երկու անգամ կազմակերպվել է հանդիպում ԱԲՀ-ի ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր՝ Ա.Գյոզալյանի հետ:
- Վերջնական տեսքի է բերվել Քոլեջի ՈՆԱ ձեռնարկի նախագիծը, որպես փորձագետ խորհրդատվություն է տրամադրվել Արայիկ Գյոզալյանի և ՄԱԿ-ի կրթության փորձագետ՝ Մարինա Գուրբոյի կողմից:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների մեկնարկով պայմանավորված նախատեսվում էր 2020թ. մարտից ձևավորվել համապատասխան աշխատանքային խմբեր, սակայն արտակարգ դրությամբ

պայմանավորված այն պլանավորվում է իրականացնել 2021թ. մարտից:

- Տեղական և միջազգային ՈԱ փորձագետների հետ խորհրդատվության նպատակով համագործակցության ընդլայման ուղղությամբ նախնական պայմանավորվածություններ ենք ձեռք բերել Ագրարային ազգային համալսարանի ՈԱ բաժնի ղեկավար՝ Լ.Զաքարյանի, Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանին կից բժշկական քոլեջի համակարգող՝ Ի.Ա.Ֆինկևիչի հետ:
- ԱԲՀ-ի ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր Ա.Գյոզալյանի հետ համատեղ մշակվել են՝ «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման» ընթացակարգի և «Առարկայական/մոդուլային դասընթացի ուսումնական ծրագիր կազմելու» կարգի նախագծերը, որոնք քննարկվել են Մանկավարժական խորհրդում և տրվել համապատասխան երաշխավորություն:
- Աշխատանքներ են տարվում Քոլեջի միջազգայնացման ուղղությամբ, մասնավորապես՝ պայմանավորվածություններ են ձեռքբերվել համագործակցության ընդլայնման ուղղությամբ, որոնց մասին ամփոփ տեղեկատվությունը կներկայացվի 2021-2022 ուստարվա ընթացքում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը իր ելույթում նշեց, որ անհրաժեշտ է հաստատել ներկայացված փաստաթղթերը, արագացնել համապատասխան խմբի ձևավորման աշխատանքները, վերանայելով գործող ՄԿԾ-ը, որից հետո սկսել աշխատել ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափի լրացմամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման» ընթացակարգի և «Առարկայական/մոդուլային դասընթացի ուսումնական ծրագիր կազմելու» կարգի նախագծերը:
3. Հանձարարել Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին ձևավորել ՄԿԾ-ի վերանայման աշխատանքային խումբ և ներկայացնել տնօրենի հաստատմանը:
4. Հանձարարել Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին Տնօրինական խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքային խմբի կազմը և իրականացման պլան-ժամանակացույցի նախագծի վերջնական տարբերակը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Ք.Երևան **18.01.2021թ.**

2021թ. հունվարի 18-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի հերթական նիստը: Նիստին մասնակցում էին քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Ն.Սահակյանը, Հ.Գրիգորյանը, հաշվապահ Ս.Հովակիմյանը, Ա.Խուդաթյանը (ուսանող) և արտաքին շահակից՝ Ա.Բարեղամյանը, նիստը նախագահում էր ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը: Խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը և Ա.Գյոզալյանը գտնվում էին հերթական արձակուրդում:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահող Ն.Եգորյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը, որն էլ քվեարկությամբ միաձայն հաստատվեց:

1. 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

   (Զեկուցող՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյան):

2. Քոլեջի 2020 թվականի բյուջեի կատարողականի և 2021 թվականի նախահաշվի կազմման մասին:

   (Զեկուցող՝ Հաշվապահ՝ Ս.Հովակիմյան):

3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի մասին:

   (Զեկուցող՝ ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ն.Եգորյանը ողջունելով բոլոր մասնակիցներին, տեղեկացրեց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժ.Անդրեասյանի 08.01.2021թ. №02/10.1/19-2021 գրության մասին, որով 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակը կազմակերպվելու է առկա: Շարունակելով ելույթը Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակով ըստ ուսումնական պլանի նախատեսված միջանկյալ և ամփոփիչ ստուգումները կազմակերպվել են ըստ նախապես հաստատված ժամանակացույցի: Նա նշեց, որ 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ ստուգումների վերաբերյալ ընդհանուր

թվային և որակական ամփոփ տվյալները կներկայացնի ուսումնական տարվա ամփոփ կատարողականում: Ինչ վերաբերում է 2020-2021 ուստարվա գարնանային կիսամյակի նախապատրաստական աշխատանքներին, ապա բոլոր անհրաժեշտ աշխատանքները գրեթե ավարտված են, կան որոշ խնդիրներ, մասնավորապես՝ դասացուցակի և ժամանակացույցի վերջնական տարբերակի հետ կապված: Ամբիոնի նիստերը ըստ պլանավորված ժամանակահատվածով կկայանան հունվարի 26-27-ը, դասախոսները հաստատման կներկայացնեն իրենց թեմատիկ պլանները, ուսումնական մասը կտրամադրի 2-րդ կիսամյակի դասամատյանները:

Ամփոփելով ելույթը, նա նշեց, որ առաջին կիսամյակում բոլոր քննությունները անցկացվել են ըստ վարման կարգի, ուսանողների կողմից գիտելիքների գնահատման արդյունքների վերաբերյալ բողոքարկումներ և տարաձայնություններ չեն արձնագրվել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականը ընդունել ի գիտություն:
2. 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները գնահատել բավարար:
3. 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի առարկայական/մոդուլային պարտքերի մարման շրջանը համարել 08.02.2021թ.-ից մինչև 12.03.2021թ.-ը:

2. **Լսեցին՝** Հաշվապահ Ս.Հովակիմյանի ելույթը Քոլեջի 2020 թվականի բյուջեի կատարողականի և 2021 թվականի բյուջեի նախահաշվի կազմման վերաբերյալ:

Ս.Հովակիմյանը ներկայացրեց 2020թ. բյուջեի կատարողականը և նշեց, որ բյուջեով նախատեսված բոլոր ծախսերը կատարված են (հիմք՝ 2020թ. կատարողական): Հաջորդիվ, նա ներկայացրեց 2021 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը (2021 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը կցվում է), նշելով, որ այն 13%-ով պակաս է նախորդ տարվա բյուջեից: Հիմնական պատճառը դիմորդների թվի նվազումն է:

Ամփոփելով ելույթը, Ս.Հովակիմյանը նշեց, որ 2020-2021 ուստարվա առաջին կիսամ-յակի ուսման վարձերի գանձման ընթացքը և արդյունքները գոհացուցիչ չեն, ուսանողների մեծ մասը ունեն դեռ նախորդ կիսամյակներից պարտքեր: Նման պատկերը ֆինանսական առումով տագնապալի է և անհապաղ միջոցներ է պետք ձեռնարկել: Այնուհանդերձ, քոլեջի ղեկավարությունը նախատեսում է ֆինանսների խնայողության հաշվին 2021-2022 ուստարվա նախաշեմին վերանորոգել Քոլեջի ճեմասրահը և երկու լսարաններ: Ամփոփելով ելույթը, Ս.Հովակիմյանը առաջարկեց այս հարցը ներկայացնել մոտակա մանկավարժական խորհրդի նիստում և մասնագիտական ամբիոնների վարիչներին հանձանարարել ձեռնարկել համապատասխան քայլեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ն.Եգորյանը իր ելույթում նշեց, որ այդ հարցը գտնվում է անձամբ իր վերահսկողության ներքո և ամբիոնի վարիչների հետ պարբերաբար քննարկվում են:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի 2020 թվականի բյուջեի կատարողականը գնահատել բավարար:
2. Քոլեջի 2021 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը երաշխավորել և ներկայացնել Քոլեջի Ընդհանուր ժողովի հաստատմանը:
3. Հանձնարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին Տնօրինական խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել ուսման վարձերի հավաքագրման վերաբերալ տեղեկատվություն:

3. **Լսեցին** Ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թվակների ռազմավարական զարգացման ծրագրի ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանը նախքան հիմնական զեկույցին անցնելը ներկայացրեց Տնօրինական խորհրդի նախորդ նիստի որոշման համաձայն՝ ՄԿԾ-ի վերանայման և ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափի աշխատանքային խմբերի կազմը (կազմերը կցվում են), իսկ աշխատանքների մեկնարկը նպատակահարմար է սկեսել մարտ ամսից:

Շարունակելով ելույթը Լ.Հարությունյանը ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. Ռազմավարական զարգացման ծրագրի ընթացքը, որը դեռ ընդամենը մեկ տարի է ինչ գործարկվում է: Առայժմ ծրագրի գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքները իրականացվում են առանց որևէ խոչընդոտների:

Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանը նշեց, որ նախատեսվում է ընթացիկ ուստարվա վերջում ներկայացնել տարեկան կատարողական զեկույց, համաձայն պլան-ժամանակացույցի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հավանություն տալ ՄԿԾ-ի վերանայման և ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափի աշխատանքային խմբերի կազմին:
2. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Հովակիմյանին պատրաստել համապատասխան հրամանը և ներկայացնել տնօրենին:
3. Լ.Հարությունյանի կողմից տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
4. Հանձնարարել տնօրինական խորհրդի անդամներին ակտիվ մասնակցել գործող ՌԶԾ-ի գործողությունների իրականացմանը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան/Ն.Եգորյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Ք.Երևան **17.05.2021թ.**

2021թ. մայիսի 17-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյանը, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Ն.Եգորյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը, Ս.Հովակիմյանը և Ա.Խուդաթյանը (ուսանող), Ա.Բարեղամյանը հարգելի պատճառով բացակայում էր:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. 2020-2021 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. Հանձնաժողովների, աշխատանքային խմբերի կազմերի վերանայման և հաստատման մասին:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

3. 2021-2022 ուստարվա ընդունելության աշխատանքների ընթացքի մասին:

(Զեկուցող, Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ն.Սահակյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2020-2021 ուստարվա պետական ափոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստական աշխատնքների վերաբերյալ:

Ողջունելով նիստի բոլոր մասնակիցներին Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ ըստ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված կարգի ժամանակացույցին համապատասխան մասնագիտական ամբիոններում քննարկվել են պետական ամփոփիչ ատեստավորման քննական հարցաշարերը և քննական տոմսերը, ինչպես նաև հանրակրթության պետական փոխադրական քննությունների թեստերը, որոնց վրա աշխատել են համապատասխան ամբիոնների դասախոսները: Անհրաժեշտ աշխատանքներում ներգրավված են եղել բոլոր մասնագիտական ամբիոնների դասախոսները և նրանց կողմից տրվել է համապատասխան երաշխավորում: Հիմնականում, քննական տոմսերում ներառված հարցերի մեծ մասը

մնացել են անփոփոխ, փոփոխության են ենթարկվել միայն գործնական հմտություններին վերաբերող հարցերը: Ինչ վերաբերում է պետական փոխադրական քննությունների հանձնաժողովներին, ապա կազմերը վերանայվել են և այսօր կներկայացնենք հաստատման: Քննություններից առաջ նախատեսվում է կազմակերպել խորհրդատվական աշխատանքներ հանձանժողովի անդամների համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- ՈՒսումնական մասի վարիչը իր ելույթում հավելեց, որ համաձայն գործող կարգի պահանջների, ուսանողներին ժամանակին տրամադրվել են բոլոր հարցաշարերը և քննությունների ժամանակացույցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ուսումնական մասի կողմից իրականացված 2020-2021 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստական աշխատանքները գնահատել բավարար:
2. Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին քննություններից առաջ տնօրենին ներկայացնել ուսանողների վարձավճարների հավաքագրման վերաբերյալ տեղեկատվություն:

2. **Լսեցին.** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը հանձնաժողովների, աշխատանքային խմբերի կազմերի վերանայման և հաստատման վերաբերյալ:

Լ.Հարությունյանն իր ելույթում ներկայացրեց պետական ամփոփիչ ատեստավորման և փոխադրական քննությունների հանձնաժողովների կազմը, ինչպես նաև 2021-2022 ուստարվա ընդունելության հանձնաժողովի նախնական կազմը: Հավելեց նաև, որ ներկայումս տնօրենի հրամանով ձևավորվել է Քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքների կազմակերպման նպատակով աշխատանքային խումը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել պետական ամփոփիչ ատեստավորման և փոխադրական քննությունների հանձնաժողովների կազմը:
2. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնին պատրաստել համապատասխան հրամանները:

3. **Լսեցին՝** Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանի ելույթը 2021-2022 ուստարվա ընդունելության աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ն.Սահակյանը իր ելույթում ներկայացրեց 2021-2022 ուստարվա դիմորդների ընդունելության մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման նպատակով

իրականացված աշխատանքները: Դիմորդների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին ընդգրկած են եղել 4 ամբիոններից ընդհանուր 12 դասախոսներ: Նրանք եղել են Երևանի և մարզերի հանրակրթական դպրոցներում: Քոլեջի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությամբ բուկլետներ և թերթիկներ են պատրաստվել և տրամադրվել ընդհանուր՝ 11 դպրոցների 9-րդ դասարանի աշակերտներին: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է քոլեջի առօրյան: Իրականցվել է գովազդի տեղադրում Facebook սոցիալական ցանցում:

Ամփոփելով ելույթը, Ն.Սահակյանը առաջարկեց միջոցներ հատկացնել Քոլեջի կայքը կամ վերագործարկելու, կամ էլ նոր կայք ստեղծելու ուղղությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը, ուսումնական մասի վարիչ Լ. Հարությունյանը, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա. Գյոզալյանը իրենց ելույթներում դրական գնահատեցին Ն.Սահակյանի կողմից իրականացված դիմորդների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ կատարված աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2021-2022 ուստարվա ընդունելության նախապատրաստական աշխատանքները գնահատել բավարար:
2. 2021-2022 ուստարվա Տնօրինական խորհրդի անդրանիկ նիստում ներկայացնել նախապատրաստական աշխատանքների արդյուավետության վերաբերյալ տեղեկանք:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

Ք.Երևան **29.06.2021թ.**

2021թ. հունիսի 29-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի 2020-2021 ուստարվա ամփոփիչ նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյանը, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Ն.Եգորյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը, Ս.Հովակիմյանը, Ա.Խուդաթյանը (ուսանող), Ա.Բարեղամյանը (արտաքին շահակից) նիստին բացակայում էր:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. 2020-2021 ուստարվա ամառային քննաշրջանի ամփոփման մասին:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարություն յան):

2. 2020-2021 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների մասին:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

3. 2020-2021 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողներին հաջորդ կուրս փոխադրելու մասին:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2020-2021 ուստարվա ամառային քննաշրջանի ամփոփման վերաբերյալ:

Ողջունելով նիստի բոլոր մասնակիցներին Լ.Հարությունյանը ներկայացրեց միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն» և «Քույրական գործ» մասնագիտություններով բոլոր կուրսերում 2020-2021 ուստարվա ամառային քննաշրջանի արդյունքները: Քննությունները կազմակերպվել և անցկացվել է ուսումնական օրացույցին և հաստատված ժամանակացույցին համապատասխան՝ 23.04.2021թ. – 25.06.2021թ.:

Քոլեջի երկու՝ միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով բոլոր կուրսերում 17.05.2021թ. տնօրենի տեղակալի և ուսումնական մասի վարիչի մասնակցությամբ կազմակերպվել և անցկացվել են քննաշրջանի հետ կապված խորհրդակցություններ:

Կիսամյակի սկզբից ուսանողներին տրամադրվել են բոլոր դասընթացների հարցաշարերը, կիսամյակի ընթացքում և քննություններից առաջ դասախոսները անցկացրել են առարկայական խորհրդատվություններ:

Քննաշրջանի ավարտին, յուրաքանչյուր կուրսի հետ ամփոփվել են տվյալ կուրսի քննաշրջանի արդյունքները, բարձրաձայնվել առաջադիմության հետ կապված հարցեր, մասնավորապես ակադեմիական պարտքեր ունեցողներից յուրաքանչյուրին առանձին-առանձին նորից հիշեցվել են ակադեմիական պարտքերի քանակը և դասընթացները:

Քննաշրջանի ժամանակացույցերը հասանելի են եղել բոլոր ուսանողներին:

Քննաշրջանի ողջ ընթացքը վերահսկվել է տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի, ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի և ամբիոնների վարիչների կողմից: Քոլեջի ամբիոնների վարիչները մասնակցել են ամբիոնների համապատասխան դասընթացների քննություններին:

Ամառային քննաշրջանում միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով միասին կազմակերպվել և անցկացվել են ընդհանուր թվով 205 ստուգարք և 11 քննություն:

Ամփոփելով ելույթը Լ.Հարությունյանը նշեց, որ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է հաշվետվությունում (հաշվետվությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հետևողական լինել ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների նկատմամբ:
3. Հանձնարարել տնօրենի տեղակալին, ամբիոնի վարիչներին. բացատրական աշխատանքներ տանել քննություններին անհարգելի պատճառով չներկայացող ուսանողների հետ:
4. Հանձնարարել ուսումնական մասին. կազմակերպված անցկացնել 2020-2021 ուստարվա ամառային քննաշրջանի ակադեմիական պարտքերի մարման գործընթացը:

2. **Լսեցին՝** Ուուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2020-2021 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրենի համապատասխան հրամաններով նշանակվել են «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2020-2021 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով կրթական ծրագրով շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովի նախագահներ:

1. 0916.01.5 «Դեղագործություն 26.05.2021թ. Հրաման №ԸԳ-29-Ա նախագահ՝ Կարեն Սարգսյան «Դենտալ-Ֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն:

2. 0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» 26.05.2021թ. Հրաման №ԸԳ-29-Ա նախագահ՝ Արման Մանուկյան «Նյու-Հոփ» ատամնաբուժական կլինիկա ՍՊԸ-ի տնօրեն:
3. 0913.02.5«Քույրական գործ» 26.05.2021թ. Հրաման №ԸԳ-28-Ա նախագահ՝ Ադելինա Մուրադյան «№5 պոլիկնիկիա» ՓԲԸ մանկաբույժ:

Շարունակելով ելույթը, Ն.Եգորյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա պետական ամփոփիչ քննությունների արդյունքները.

- «Դեղագործություն» մասնագիտությամբ թվով 40 շրջանավարտներից պետական ամփոփիչ քննություններին մասնակցեցել են 39-ը շրջանավարտ, նրանք ցուցաբերեցին հետևյալ առաջադիմությունը. գերազանց՝ 4 ուսանող, լավ՝ 22, բավարար՝ 13:
- «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ թվով 16 շրջանավարտներ հանձնեցին միջմոդուլային համալիր երկու պետական քննություններ և ցուցաբերեցին հետևյալ առաջադիմությունը.գերազանց առաջադիմությամբ՝ 4 ուսանող, լավ՝ 4, բավարար՝ 8:

Եզրափակելով ելույթը, Ն.Եգորյանը հավելեց, որ պետական ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ ամբողջկան տեղեկատվությունը ներկայացված է հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում (հաշվետվությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյանին ուսումնասիրել հանձնաժողովների նախագահների առաջարկությունները և հաջորդ ուստարվա ընթացքում ներկայացնել բարելավման միջոցառումներ:

3. **Լսեցին.** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2020-2021 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողնե-րին կուրսից կուրս փոխադրելու վերաբերյալ:

Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն իր ելույթում ներկայացրեց 2020-2021 ուստարվա ուսումնական պլանները կատարած, ստուգարքներն ու քննությունները հանձնած միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն» և «Քույրական գործ» մասնագիտություններով ուսումնառողների ցանկը: Հանգամանորեն ներկայացրեց ստուգարքների և քննությունների ըստ մասնագիտությունների դրական գնահատկան ստացած ուսանողների ցուցակները:

Եզրափակելով ելույթը Ն.Եգորյանն առաջարկեց ցուցակում ներառված ուսանողներին փոխադրել հաջորդ կուրս: Փոխադրվողների ցանկում ներառված են նաև փորձաշրջանում գտնվող ուսանողները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Ցուցակում ներառված ուսանողներին համապատասխանաբար փոխադրել հաջորդ կուրս:
3. ՄՌԿ և ընդհանուր բաժնին պատրաստել ուսանողների կուրսից կուրս փոխադրելու հրամանի նախագիծ և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան